# ՄԱՐԻՈՒՊՈԼԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

# ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Մինչև մեր հոգու խորքը ցնցված անհողդողդ, կայուն բոլշևիկ լենինյան-ստալինյանի, ծանր արդյունաբերության բանակի սիրելի հրամանատարի, անմոռանալի Գրիգորի Կոնստանտինովիչ Որջոնիկիձեյի մահվան կսկծալի լուրով, մենք, Մարիուպոլի գործարանի և «Ազովստալի»՝ նրա անվան շինարարության բանվորներս, ինժեներներս ու ծառայողներս մեր խոր վիշտն ենք հայտնում այն ամենածանր կորստի առթիվ, վոր կրեցին մեր կուսակցությունը և սոցիալիստական հայրենիքը:

Այս վշտալի րոպեներին մեր մտքերն ու զգացմունքներն ուղղված են դեպի ձեզ, մեր մեծ, ջերմորեն սիրված առաջնորդ և ուսուցիչ, հայր և բարեկամ Իոսիֆ Վիսարիոնովիչ, դեպի ձեզ, վոր ամբողջ խորհրդային մեծ ժողովրդի հետ միասին ապրում եք Սերգո Որջոնիկիձեյի— ձեր ամենամերձավոր աշակերտի, բարեկամի, կուսակցության վոխերիմ թշնամիների դեմ, տրոցկիստ-զինովևյանական յերիցս անարգ դավաճանների ու մարդասպանների, աջ թափթփուկների ու հակահեղափոխական այլ աղտեղության դեմ մղվող պայքարի, Մարքսի-Լենինի մեծ գործի հաղթանակի համար մղվող պայքարի զինակցի կորստյան սուր կսկիծը:

Անսահման է մեր ցավը: Անսահման է կոմունիզմ կառուցողների մեծ ընտանիքի վիշտը, ընտանիք, վորից հեռացավ դեպի անէություն, ստալինյան մեծ կամքի տեր մարդը, կուսակցության ու կառավարության փորձված ղեկավարը, ծանր արդյունաբերության հաղթանակների խոշորագույն կազմակերպիչը, հրճվալից, յերջանիկ սոցիալիստական կյանքի համար պայքարող բոցաշունչ մարտիկը:

Խոնարհում ենք մեր գլուխները ու մարտական դրոշները սիրելի ժողկոմ Սերգոյի դագաղի առջև: Նրա պայծառ, լուսաշող կյանքը, վորը մինչև վերջ նվիրված էր աշխատավորության գործին, որինակ կծառայի մեզ, ծանր արդյունաբերության աշխատողներիս համար՝ այն գործը հաղթականորեն շարունակելու համար մղվող մեր պայքարում, հանուն վորի ապրեց ու պայքարեց անմոռանալի Սերգոն:

Անհողդողդ ստալինյանի պատկերը, նրա յերկաթե կամքն ու անհաշտությունը դեպի թշնամիները, նրա բոլշևիկյան կիրքն աշխատանքի մեջ, մեզ կվոգեշնչեն դեպի նորանոր հաղթանակներ, ծանր արդյունաբերության է՛լ ավելի բարձր մակարդակի հասնելու համար, մետալուրգիայի գիգանտի— Սերգո Որջոնիկիձեյի անվան, «Ազովստալի» շինարարությունն ավարտելու համար:

Մարքսի-Լենինի-Ստալինի անպարտելի դրոշի տակ, վորը լուսավորում էր սիրելի Սերգոյի կյանքի ամբողջ ուղին, մենք առաջ կընթանանք դեպի նորանոր հաղթանակներ՝ կոմունիստական հասարակության կառուցման գործում:

ՆԱՄԱԿԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՅԵՎ «ԱԶՈՎՍՏԱԼԻ» ՍԵՐԳՈ ՈՐՋՈՆԻԿԻՁԵՅԻ ԱՆՎԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ 12.740 ԲԱՆՎՈՐՆԵՐ, ԻՆԺԵՆԵՐՆԵՐ, ՏԵԽՆԻԿՆԵՐ ՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ: